Գործ թիվ ԵԴ/30692/02/22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՍԵՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.11.2022թ. ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նախագահությամբ դատավոր՝ Էդ. Ամալյանի, քննության առնելով թիվ ԵԴ/30692/02/22 քաղաքացիական գործով «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Գարիկ Մարտիրոսյանի միջնորդությունը՝ Գավառի ԲԿ ՓԲԸ-ի ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/11 ծածկագրով գնման ընթացակարգը կասեցումից հանելու մասին,

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Միքայել Ավետիսյանը 13.06.2022թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ պատասխանող «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի՝ Գավառի ԲԿ ՓԲԸ ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/11 ծածկագրով Գնահատող հանձնաժողովի 07.05.2022թ. թվագրմամբ 07.06.2022թ-ին կազմված նիստի թիվ 11բ արձանագրությունը և ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/11 ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը՝ 1-ին չափաբաժնի մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի /Դատավոր՝ Ա.Պետրոսյանի/ 17.06.2022թ.-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է հայցվորին:

Հայցվորի ներկայացուցիչը 15.07.2022թ.-ին կրկին ներկայացրել է հայցադիմումը, որը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի /Դատավոր՝ Ա.Պետրոսյանի/ 20.07.2022թ.-ի որոշմամբ հայցադիմումը կրկին վերադարձրել է հայցվորին:

Հայցվորը վերացրել է հայցադիմումի թերությունները և 09.08.2022թ-ին հայցադիմումը կրկին ներկայացրել է դատարան: Հայցադիմումը 09.08.2022թ-ին մակագրվել է դատավոր Էդ. Ամալյանին, դատավորի աշխատակազմին է հանձնվել 10.08.2022թ-ին:

Դատարանը 17.08.2022թ.-ի որոշմամբ հայցադիմումն ընդունել է վարույթ:

Դատարանի 16.09.2022թ.-ի որոշմամբ սույն քաղաքացիական գործով նշանակվել է նախնական դատական նիստ:

Դատարանի 24.10.2022թ.-ին որոշում է կայացրել դատավարության մասնակիցների միջև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին:

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Գարիկ Մարատի Սողոմոյանյանը 09.11.2022թ.-ին միջնորդություն է ներկայացրել դատարան՝ Գավառի ԲԿ ՓԲԸ-ի ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/11 ծածկագրով գնման ընթացակարգը կասեցումից հանելու մասին, նշելով, որ հայտարարված գնման ընթացակարգի առարկա հանդիսացող շարժական,

ուլտրաձայնային սարքի ձեռքբերումը նպատակ ունի Գավառի տարածաշրջանի ազգաբնակչությանը ապահովելու ճշգրիտ ախտորոշմամբ, որը համապատասխանում է արդի պահանջներին, իսկ իրենց ունեցած ներկայիս ուլտարաձայնային սարքավորումը չի կարող ապահովել, և վերջինս ստացիոնար է, որը հնարավոր չի տեղափոխել , իսկ պահանջվող սարքը շարժական է, նրա խիստ անհրաժեշտությունը կայանում է նրանում, որպեսզի կարողանա հաշմանդամություն ունեցող անձանց, որոնք ունեն տեղափոխման խնդիր կարողանան հետազոտվել հակառակ դեպքում առողջական լուրջ խնդիրներ ունեցող պացիենտները դուրս են մնում հետազոտությունից և բուժումից, ինչպես նաև նպաստում է պացիենտների արտահոսք այլ բուժիմնարկներ, որը առաջացնում է ֆինանսական և հոգեկան անհարմարություններ և ազգաբնակչության բուռն դժգոհությունը:

Միջնորդաբերը նշել է, որ վերոնշյալ փաստական հանգամանքների հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 234.11-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, դատարանին խնդրել է Գավառի ԲԿ ՓԲԸ-ի ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/11 ծածկագրով գնման ընթացակարգը կասեցումից հանել:

Ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը, Դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Դատարանն արձանագրում է, որ վկայակոչված իրավական կարգավորումից հետևում է, որ օրենսդիրը հայցի հարուցմամբ պայմանավորել է համապատասխան գնման գործընթացի կասեցումը՝ ինքնաբերաբար, միաժամանակ հավասարակշռելու համար դատավարության մասնակիցների իրավունքները և օրինական շահերը, հնարավորություն է տվել հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով կասեցումից հանել գնման գործընթացը:

Սույն դեպքում, Դատարանը հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վիճարկվում է բժշկական կենտրոնի կողմից հայտարարված գնման գործընթացը, միաժամանակ վերջինիս կողմից գնման հայտարարումը պայմանավորված է հանրային շահով ուստի Դատարանը գտնում է, որ թիվ ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/11 ծածկագրով գնման ընթացակարգը պետք է կասեցումից հանել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ, 234.11-րդ, 361-րդ, 362-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Գարիկ Մարտիրոսյանի միջնորդությունը՝ Գավառի ԲԿ ՓԲԸ-ի ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/11 ծածկագրով գնման ընթացակարգը կասեցումից հանելու մասին, բավարարել.

Կասեցումից հանել Գավառի ԲԿ ՓԲԸ-ի ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/11 ծածկագրով գնման ընթացակարգը:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:

**Դատավոր՝** **Էդ. Ամալյան**